«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

14 հոկտեմբերի, 2021թ. N 59 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25–րդ հոդվածի 4–րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 4–րդ մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 5.1.1. (6) կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննություններից ազատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Պալատի խորհրդի 2021 թվականի հունիսի 10-ի N 37 - Լ որոշումը համարվում է անվավեր:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. հոկտեմբերի 14-ի N 59 - Լ որոշման

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ

Բովանդակություն

1 Ընդհանուր դրույթներ 3
2 Որակավորման քննություններից ազատումները 3
3 Ազատումներ շնորհող մարմինը 5
4 Ազատումների շնորհման գործընթացը 5
Կարգի հավելված 1 8
Կարգի հավելված 2 9

1 Ընդհանուր դրույթներ

1.1 «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարարական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննություններից ազատման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է ի կատարումն «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25–րդ հոդվածի 4–րդ մասի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 4–րդ մասի և Պալատի կանոնադրության 5.1.1. (6) կետի պահանջների:

1.2 Սույն Կարգով կարգավորվում են Պալատի կողմից աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների (այսուհետ՝ Որակավորման քննություններ) ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատման հետ կապված հարաբերությունները:

2 Որակավորման քննություններից ազատումները

2.1 Որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատվում են Կարգի 2.2, 2.4, 2.5, 2.6 և 2.7 կետերում նշված անձինք: *(Լրացում 16.03.2022թ. N 2-L որոշում)*

2.2 Ազատում կարող է շնորհվել բակալավրի աստիճան ունեցող անձանց Որակավորման քննությունների ծրագրի առաջին մինչև 2 առարկայի քննություններից, իսկ մագիստրոսի աստիճան ունեցող և/կամ հնգամյա բարձրագույն կրթություն ունեցող (դիպլոմավորված մասնագետներ) անձանց՝ առաջին մինչև 4 առարկայի քննություններից, եթե նրանք 2009 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում ունեն աուդիտորական ծառայությունների իրականացման և/կամ հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման առնվազն 6 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 3 տարին պետք է զբաղեցրած լինեն ստորև թվարկված պաշտոններից որևէ մեկը՝

ա) համապատասխան աշխատանքային փորձն ընդգրկող ժամանակահատվածում գործող հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ սահմանված հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպության, խոշոր կազմակերպության կամ միջին կազմակերպության գլխավոր հաշվապահ.

բ) աուդիտորական կազմակերպությունում մենեջեր կամ ավելի բարձր պաշտոն, կամ

գ) համապատասխան աշխատանքային փորձն ընդգրկող ժամանակահատվածում գործող հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ սահմանված հանրային

հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություններին, խոշոր կազմակերպություններին և (կամ) միջին կազմակերպություններին հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունում հաշվապահական, խորհրդատվական կամ հարկային ծառայության մենեջեր կամ ավելի բարձր պաշտոն:

2.3 Կարգի 2.2 կետով նախատեսված աշխատանքային փորձի մեջ հաշվի չի առնվում բակալավրիատում կամ հնգամյա ուսումնառության ընթացքում ձեռք բերված ստաժը (աշխատանքային փորձը), ինչպես նաև երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը: Մագիստրատուրայում սովորելուն զուգահեռ, ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ (ոչ լրիվ աշխատանքային օրով), ինչպես նաև համատեղությամբ աշխատելու ժամանակահատվածում ձեռք բերված ստաժի տևողությունը հաշվարկելիս կիրառվում են ստաժի տևողությունը լրիվ օրվան համապատասխանեցնող գործակիցներ՝ այնպես, որ հաշվի առնվեն միայն համապատասխան պաշտոնում կամ հաստիքում փաստացի աշխատած ժամերը, ընդ որում՝ մագիստրատուրայում սովորելուն զուգընթաց աշխատանքային փորձը կարող է հաշվի առնվել առավելագույնը լրիվ օրվա 75%-ի չափով:

2.4 Ազատում շնորհվում է Որակավորման քննությունների ծրագրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ առարկաների քննություններից այն անձանց, ովքեր 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ստացել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի և ապահովագրական բրոքերային կազմակերպությունների գլխավոր հաշվապահի որակավորման վկայականներ:

2.5 Ազատում շնորհվում է «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՀԱԱ) աուդիտորի որակավորում ունեցող անձանց՝ Որակավորման քննությունների ծրագրի բոլոր առարկաների քննություններից: Ազատում շնորհվում է ՀՀԱԱ-ի հաշվապահի որակավորում ունեցող անձանց՝ Որակավորման քննությունների ծրագրի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ առարկաների քննություններից: Ազատում շնորհվում է ՀՀԱԱ-ի որակավորման քննությունները հանձնած և (կամ) քննություններից ազատված՝ ՀՀԱԱ աուդիտորի կամ հաշվապահի որակավորում չունեցող անձանց՝ Որակավորման քննությունների ծրագրի այն առարկաների քննություններից, որոնք համարժեք են ՀՀԱԱ–ի կողմից սահմանված որակավորման համար հանձնված (ազատված) քննությունների առարկաներին:

2.6 Ազատում շնորհվում է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (այսուհետ՝ ACCA) անդամներին՝ Որակավորման քննությունների ծրագրի բոլոր առարկաների քննություններից: Ազատում շնորհվում է ACCA-ի որակավորման քննությունները հանձնած և (կամ) որոշակի քննություններից ազատված՝ ACCA-ի անդամ չհանդիսացող անձանց՝ Որակավորման քննությունների ծրագրի այն առարկաների քննություններից, որոնք համարժեք են ACCA–ի որակավորման համար հանձնված (ազատված) քննությունների առարկաներին: Որակավորման քննությունների ծրագրի առարկաների և ACCA–ի որակավորման քննությունների առարկաների համարժեքությունը որոշվում է ըստ Կարգի հավելված 1-ի: *(Փոփոխություն 22.06.2022թ. N 19-L որոշում)*

2.7 Ազատում շնորհվում է Որակավորման քննությունների ծրագրի 1-ին և 3-րդ առարկաների քննություններից այն անձանց, ովքեր 2015 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում առնվազն 3 տարի զբաղեցրել են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքով սահմանված հանրային հատվածի կազմակերպության գլխավոր հաշվապահի և/կամ հաշվապահական ծառայության ղեկավարի, և/կամ ֆինանսական ծառայության ղեկավարի պաշտոնը և ունեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված հանրային հատվածի հաշվապահի որակավորման գործող վկայական: *(Լրացում 16.03.2022թ. N 2-L որոշում)*

2.8 Սույն Կարգով նախատեսված ազատումները չեն կարող շնորհվել անձանց, որոնց Պալատի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորումը չեղարկվել է: *(Լրացում 16.03.2022թ. N 2-L որոշում)*

3 Ազատումներ շնորհող մարմինը

3.1 Որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատումներ շնորհող մարմին է հանդիսանում Պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

3.2 Ազատումների հետ կապված աշխատանքների կազմակերպումն ապահովում է Պալատի աշխատակազմը:

4 Ազատումների շնորհման գործընթացը

4.1 Որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատում ստանալու նպատակով դիմած անձը ներկայացնում է աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատում ստանալու հայտ՝ Կարգի հավելված 2-ում բերված ձևով: Հայտին պետք է կցվեն ազատումների համար Կարգի 2-րդ բաժնով նախատեսված պայմանների բավարարումը հիմնավորող փաստաթղթեր՝ անձնագիր, հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանք կամ սոցիալական ապահովության քարտ կամ դրա (դրանց) բացակայության վերաբերյալ համապատասխան մարմնից տրված տեղեկանք կամ նույնականացման քարտ, ՀՀԱԱ-ի կամ ACCA-ի քննությունները հանձնած լինելը, կամ քննություններից ազատում ստացած լինելը, բարձրագույն կրթություն և համապատասխան աշխատանքային փորձառություն ունենալը (ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում գործատուի՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն, խոշոր կազմակեր-պություն կամ միջին կազմակերպություն հանդիսանալը) հավաստող փաստաթղթեր:

4.2 Կարգի 2.2 կետով սահմանված առաջին չորս առարկաների քննություններից մեկից կամ մի քանիսից ազատելու վերաբերյալ որոշումը կայացնում է Հանձնաժողովը՝ հարցազրույցի հիման վրա: Հարցազրույցի առարկա, մասնավորապես, կարող է լինել այն, թե տվյալ անձն ինչպիսի փաստացի փորձառություն ունի (ոչ թե պաշտոնի ֆորմալ անվանումը, այլ կատարած գործառույթն ըստ էության և դրա ընդգրկումն ու ինտենսիվությունը՝ ազատման ենթակա առարկայի բովանդակությունը ծածկելու տեսանկյունից) և որքանով է տեղյակ մասնագիտության արդի զարգացումներին և կարգավորումներին:

4.3 Կարգի 2.2 կետում նշված հիմքով որևէ առարկայից ազատելու կամ չազատելու վերաբերյալ իր որոշման մեջ Հանձնաժողովը շարադրում է ընդունված որոշումը հիմնավորող եզրահանգումները:

4.4 Ստացված հայտերը քննարկվում են Հանձնաժողովի առաջիկա նիստում:

4.5 Պալատի աշխատակազմը քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատման հայտը ստանալուց հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում պատրաստում է հայտին կից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

4.6 Որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատման նպատակով դիմած անձը, ազատումներ ստանալուց հետո, 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում վճարում է ազատված յուրաքանչյուր առարկայի քննության վճարը՝ ազատումը շնորհելու

պահին գործող չափով: Քննության վճարը վճարված չլինելու դեպքում՝ ազատման վերաբերյալ որոշումը համարվում է անվավեր: Քննության վճար չի գանձվում Կարգի 2.5 կետի համաձայն շնորհված ազատումների գծով:

4.7 Պալատի աշխատակազմը, հիմք ընդունելով Հանձնաժողովի որոշումը և քննության վճարը սահմանված ժամկետում վճարված լինելը վկայող փաստաթղթերը, ազատումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը գրանցում է աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների մասնակիցների տվյալների բազայում:

4.8 Աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկայի քննությունից ազատումը հավասարազոր է Աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի տվյալ քննական առարկան անցողիկ միավորով հանձնելուն:

Կարգի հավելված 1

Պալատի որակավորման քննություններից ազատման նպատակով ACCA-ի և Պալատի որակավորման քննությունների ծրագրերի առարկաների համարժեքության աղյուսակ

(Լրացում 22.06.2022թ. N 19-Լ որոշում)

Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկան	**Համարժեք համարվող ACCA-ի որակավորման քննությունների ծրագրի առարկան**
Ֆինանսական հաշվառման հիմունքներ	Financial Accounting (FA)
Ֆինանսական տեղեկատվության կառավարման համար	Management Accounting (MA)
Իրավագիտության հիմունքներ	Corporate and Business Law
ՀՀ հարկային օրենսդրություն	Taxation
Ֆինանսական կառավարում և վերահսկողություն	Performance Management (PM) կամ Advanced Performance Management (APM) և Financial Management (FM) կամ Advanced Financial Management (AFM)
Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում	Financial Reporting (FR-INT) կամ Strategic Business Reporting (SBR)
Աուդիտ և ներքին վերահսկողություն	Audit and Assurance (AA-INT) կամ Advanced Audit and Assurance (AAA-INT)

Կարգի հավելված 2

ՀԱՅՏ

աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատում ստանալու

Ես՝ _____ ս,
անուն, հայրանուն, ազգանուն

գրանցվել եմ որպես _____ որակավորման
որակավորման տեսակը (աուդիտորի, փորձագետ հաշվապահի)

քննությունների մասնակից և ներկայացնում եմ հայտ՝ որակավորման քննությունների ծրագրի ստորև նշված առարկաների քննություններից ազատում ստանալու նպատակով.

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____

Հիմք՝ Կարգի _____ կետ:

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5.

Ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում եմ:

« » _____ 20 թ. _____
Ամսաթիվ Ստորագրությունը